

Ընդհանրապես, սկիզբէն հրճուանքով ընդառաջութեցաւ գողափարը, և միշտ գորովագին հետաքրքրութեամբ է որ շրջապատութեցաւ գործը, երկու տարիներու և աւելի ժամանակի այն ընթացքին, ուր շարունակութեցու կառուցումին աշխատանքը:

Ասիկա կ'ապացուցանէ բան մը, զեղեցիկ և սրտապնդիչ այն երեւոյթը թէ, հակառակ դատարարութեան և կենցաղական ըմբռնումներու բերած բոլոր նորութիւններուն, որոնք շատ բան փոխած են թերեւս մեր հին բարքերէն, կրօնքին զգացումը և Ազգային Եկեղեցիի գողափարը մեր ժողովուրդին սիրային մէջ կ'պահեն սթիկական պատուոյ այն դիրքը, որուն արժանի են անոնք, իրենց անցեալին գիտակցութեամբը պայծառացած և իրենց տապաղային ուղղութիւնը չ'կորսնցուցած համայնքներուն կեանքին մէջ:

Մեր ազգային ոգին ցոլացնող պատկերին մէջ կարեւոր գիծ մըն է ասիկա, որուն համար կ'արժէ որ գուրգուրանք և սէր միայն տածէ ամէն Հայ:

Եթէ Քրիստոնէութիւնը լոյսի և սիրոյ, անկեղծութեան և գթութեան ներդաշնակուած զօրութիւնն է երկրի վրայ, ինչպէս կ'հաւատանք, հարկ է ընդունինք թէ մեր Եկեղեցին, ինչպէս անցեալին մէջ եղած է, ապագային եւս դեռ պիտի լինի մին կարեւորագոյն այն գործօններէն, որոնք միայն կրնան մեր ցեղային նկարագիրը հաղորդակից ընել այդ մեծ և բարի զօրութեան, այն ճամբով որ ուղղակի սրտին կ'տանի, և այն կերպով՝ որուն մէջ մեր զգացումը ոչինչ պիտի գտնէ անհարազատ և օտարոտի:

Թո՛ղ չ'ըսուի թէ նիւթական շինուածքի մը հանդէպ ցոյց տրուած ժողովրդական այս շահագրգրութենէն իրաւացի է հանել բարոյական այսքան կարեւոր եզրակացութիւն մը:

Այդ Շէնքը բարձրացած է հոգ, գոհացում տալու համար ոչ թէ նիւթական կամ կենցաղական այլ բարոյական և հոգեկան պէտքի մը: Նշան մըն է ան, որ կ'ներկայացնէ երկար դարերէ ի վեր մեր մէջ ապրած, մեզի համար արդիւնազորածուած սկզբունքի մը ոյժը, մեր ազգային խաչալին խորհուրդը ամբողջ: Անիկա կ'պատկերացնէ գողափարը, որ մեր էութիւնը լուսաւորեց այն օրէն ուր ցեղին զգացումը ազգային գիտակցութեան փոխութեցաւ մեր մէջ, ինքնուրոյն գրականութեան մը հաստատումովը, սեփական պատմութեան մը